

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ԱՆԿՈՒՄԸ

/ՃԳՆԱԺԱՄԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ/

/զեկույց/

Հետազոտական աշխատանքի հիմնական հեղինակներն են՝

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հետազոտական խումբ

Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության
ֆակուլտետի հետազոտական խումբ

Հետազոտական խումբ. Արշակ Բալայան, Արմեն Գաբալյան, Ավետիք
Մեջլումյան

Հրայր Մարուխյան հիմնադրամ



www.depop.am

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ԳՈՂՈՂԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ

ՆԵՐԿԱՑԱՑՎԵԼ Է ՄԱԿ-Ի ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ ԳՐԱՄԵՆՑԱԿԻ՝ 2013Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ

Հայաստանի ազգաբնակչության կրճատման հրամայականը

Իմ երկրում ներքին ցեղասպանություն է տեղի ունենում: Կառավարությունը երիտասարդներին ոչ մի հնարավորություն չի թողնում՝ նրանց խեղդելով այնքան ժամանակ, մինչև թողնեն երկիրը և հեռանան: Խնդիրն արդեն վաղուց անցել է միայն քաղաքական խնդիր լինելու սահմանը. այն արդեն դարձել է համամարդկային հիմնախնդիր, ինչը պետք է անհապաղ լուծվի: Կառավարությունը մատը մատին չի տալիս իր սեփական ժողովրդին օգնելու համար:

Շառլ Ազնավուր

**Բարերար, շանտոնյե, Յունեսկոյում և Շվեյցարիայում, Հայաստանի Հանրապետության դեսպան
2011թ. դեկտեմբեր**

Մենք պետք է շարունակենք Հայաստանը բոլոր միջազգային ծրագրերից մեկուսացած պահելու միտված քաղաքականությունը: Այս մարտավարությունը արդյունքներ է տալիս...

Եթե մենք մի քիչ առաջ նայենք, կտեսնենք, որ ժողովրդագրական իրավիճակը նույնպես դրական դեր է կարտարելու, և ներկայումս նույնպես կատարում է: Այսօր Ադրբեջանի ազգաբնակչությունը հասնում է 9.5 միլիոնի: Հայաստանում 2 միլիոնից քիչ մարդ է ապրում: Եթե մեր ազգաբնակչությունը շարունակի այս տեմպով աճել, իսկ Հայաստանինը՝ նվազել, ապա մոտ 5-7 տարուց մեր ազգաբնակչությունը տասն անգամ կգերազանցի: Սա ինքնին ուժի աղբյուր է: Եթե մենք նաև հաշվի առնենք մեր էներգետիկ քաղաքականությունը, ապա կարծում եմ մենք կհասնենք մեր ուզածին:

Իլհամ Ալիև

Ադրբեջանի նախագահ

2013թ. մայիս

Մենք կորցնում ենք գյուղը՝ բնական վերարտադրության առանցքային հատվածներից մեկը: Եվ եթե առաջիկա 5-7 տարվա ընթացքում Հայաստանում իրավիճակը չփոխվի, մեր պատմության ընթացքում առաջին անգամ ունենալու ենք այն խնդիրը, որ բնական վերարտադրություն չի լինելու: Այսինքն՝ մահերի թիվը գերազանցելու է ծնունդների թվին... Հայաստանից հեռանում են հիմնականում ինտելեկտուալ, մտավոր և կարող ուժերը: Մնում են հիմնականում պետական համակարգում աշխատող և արտագաղթելու հնարավորություն չունեցող մարդիկ:

Բազրատ Ասատրյան

ՀՀ Կենտրոնական Բանկի նախկին նախագահ

2013թ. հունիս

Մեր երկրի ամենամեծ պրոբլեմը մարդկանց մեջ չի, մեր երկրի ամենամեծ պրոբլեմը կաշտակերները չեն, մեր երկրի ամենամեծ պրոբլեմները հանցագործները չեն, մեր երկրի ամենամեծ պրոբլեմը գաղջ մթնոլորտն է: Այդ գաղջ մթնոլորտը պետք է վերանա... Դա միայն իշխանությունների պատասխանատվության ոլորտում չի: Արտագաղթի համար առաջին պատասխանատուն իշխանությունն է, բայց միայն իշխանությունը չի, որովհետև Հայաստանից արտագաղթում են ոչ թե նրա համար, ինչպես հաճախ ասում եք՝ արդարության պակասի կամ աշխատատեղ չլինելու հետևանքով: Արտագաղթի բուն պատճառը հենց այդ գաղջ մթնոլորտն է, այն, որ մարդիկ լույս չեն տեսնում, հույս չեն տեսնում... Եթե չկա քաղաքացիների ակտիվությունը, ինչպե՞ս վարվեմ: Եթե չկա ձեր օժանդակությունը, միայն խոսում եք, կոնկրետ չեք օգնում, ինչպե՞ս դա անեմ: Անելու եմ, բայց եթե օգնեք, ավելի արագ մեր գործը կստացվի:

Մերժ Սարգսյան

Հայաստանի Հանրապետության Նախագահ

2013թ. Մարտ

Հարգելի՛ հայրենակիցներ.

Հայաստանի բնակչության նվազումը խիստ լուրջ խնդիր է: Ցեղասպանությունից և բոլշևիկյան հեղափոխությունից ի վեր՝ 70 տարուց ավելի, համայն հայության պայքարն ընթացել է «Մի օր մենք կունենանք ազատ, անկախ Հայաստան» կարգախոսով: Երբ Հայաստանը 1991 թվականին անկախություն նվաճեց, երկրի բնակչությունը շուրջ 4 միլիոն էր: Այսօր այն 3 միլիոնից պակաս է: Ազատ, անկախ Հայաստան ունեցանք, սակայն այսօր ականատեսն ենք, թե ինչպես են հայերն աննախադեպ արտագաղթի արդյունքում սփռվում աշխարհով մեկ: Մարդկանց զանգվածային արտահոսքը հանգեցրել է ճգնաժամային իրավիճակի: Այն կարող է սպառնալ երկրի գոյությանը: Հայաստանի թշնամիները չարախնդությամբ են այս ամենին հետևում: Նրանք շարունակում են շրջափակումը և գոհունակությամբ հետևում, թե ինչպես է Հայաստանը դատարկվում:

Հետազոտական աշխատանքի նկարագրություն

Հեշտ է քննադատության ալիքը, հատկապես սփյուռքի կողմից, ուղղել Հայաստանի ներկայիս կառավարությանը. մինչդեռ մենք գիտակցում ենք, որ անհրաժեշտ է խնդրին առավել կառուցողական եվ գիտական մոտեցում ցուցաբերել: Անհրաժեշտություն կար ***Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի եվ բնակչության նվազման*** վերաբերյալ հենց **Հայաստանի ներսից** հետազոտական աշխատանք իրականացնելու: Երևանում գործող՝ Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոնի (ՄԶՄԿ) հետ համագործակցելով՝ հետազոտական աշխատանք իրականացնելու հայտարարություն է տարածվել, ինչի արդյունքում ընտրվել են հետևյալ հետազոտական խմբերը՝

1. Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հետազոտական խումբ
2. Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի հետազոտական խումբ
3. Հետազոտական խումբ (Արշակ Բալայան, Արմեն Գաքավյան և Ավետիք Մեջլումյան)
4. Հետազոտողներ՝ Հրայր Մարուխյան հիմնադրամից:

Գոլովեան Հիմադրամի դերը հետազոտական աշխատանքներն ու հարակից ծախսերը ֆինանսավորելն էր: Ողջ ծրագրի ընթացքում պահպանվել է հետազոտական խմբերի անկախությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակը

Հայաստանի բնակչության նվազման հիմնական դրոշմապատճառները բացահայտելու նպատակով գիտական եվ առարկայական մոտեցում ցուցաբերելու հրամայականը:

Հետազոտական աշխատանքի սահմանափակումները

Սույն հետազոտական աշխատանքին աջակցողների և այն իրականացնողների իրական ցանկությունն այս հետազոտությամբ խնդրի վերաբերյալ համազգային քննարկումների հիմք դնելն է, որոնք ոչ թե մատնացույց կանեն կամ կփնտրեն մեղավորների, այլ թույլ կտան մեզանում քննարկում ծավալելու և հասկանալու, թե խնդիրը լուծելու համար պետական և ոչ պետական մարմինների կողմից ի՞նչ պետք է ձեռնարկվի Հայաստանում և սփյուռքում: Միայն այն բանից հետո, երբ կարողանանք հաղթահարել բոլոր տաբուները և մեկմեկու հետ պարզ խոսել, կարող կլինենք սկսել մարդկանց՝ Հայաստանից դուրս մղող գործոնները քննարկելու գործընթացը:

Առկա է որոշակի դրական տեղաշարժ

Ողջունելի են ներկայիս կառավարության հանձն առած որոշ նախաձեռնություններ: Նման նախաձեռնություններից է ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից իրականացվող՝ սիրիահայերի ընդունման ծրագիրը: Դեռ վաղ է արդյունքների մասին խոսելը, սակայն հարց է մնում, թե արդյոք սիրիահայերը կմնան Հայաստանում այն բանից հետո, երբ պատերազմական գործողություններն ավարտվեն Սիրիայում, և այնտեղ վերահաստատվի խաղաղություն:

Տնտեսության զարգացման ոլորտում կա որոշակի դրական տեղաշարժ, ինչում էական դերակատարություն ունի նաև մասնավոր ոլորտը: Որոշ բանկեր առաջարկում են նաև միկրովարկեր, ինչը խրախուսում է ձեռնարկատիրության զարգացումը և նպաստում աշխատատեղերի ստեղծմանը: Այսպես, օրինակ, «Արցախ» բանկը մեծ տեղ է հատկացնում ձեռնարկատիրական նպատակներով միկրովարկերի տրամադրմանը: Միկրովարկեր տրամադրելու շնորհիվ հաջողություններ են արձանագրվել գյուղատնտեսության և մանր

ձեռնարկատիրության զարգացման ոլորտներում: Եվ որ ամենակարևորն է, սույն ծրագրի ձախողման գործակիցը խիստ ցածր է, և դրական արդյունքները սպասվածից ավելին են:

Հետագա աշխատանքի անհրաժեշտությունը

Այս հետազոտությունը բոլոր հարցերին չի անդրադառնում և չի պարունակում բոլոր խնդիրների լուծումները: Սույն զեկույցում տեղ չեն գտել և դեռևս խորն ու մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունեն հետևյալ խնդիրները.

- Կազմակերպված և արդյունավետ խորհրդարանական ընդդիմություն ունենալու անհրաժեշտությունը:
- Մարդկանց գնդունակության մակարդակի խորն ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն կտա պարզելու, թե ինչու են Հայաստանում որոշ ապրանքների գներ 3-4 անգամ ավելի թանկ, քան հարևան որոշ երկրներում: Հարկ է նաև ուսումնասիրել շրջափակման հետևանքները, առևտրի իրականացման խոչընդոտները և տարիքները: Հարցը, որին պետք է պատասխան տրվի, հետևյալն է. «Արդյոք կա՞ հասարակության մի հատված, որը շահում է առևտրային սահմանափակումներից՝ գները բարձրացնելով և դրանք բարձր պահելով»:
- Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի վերլուծությունը, որում շեշտադրում պիտի կատարվի ոչ այնքան ընդհանուր գիտությունների հաղորդման, որքան արհեստների գծով կրթության վրա:
- Հողերի հատկացման պայմանների մշակում, ինչի շնորհիվ հնարավոր կլինի հողեր նվիրաբերել գյուղատնտեսությամբ զբաղվելու ունակ ընտանիքներին՝ պայմանով, որ այդ սեփականությունն օգտագործեն գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով (1800 – 1900թ.թ. Հյուսիսային Ամերիկայում իրականացված այսպիսի ծրագրի նմանությամբ): Նման ծրագրերը կարող են հովանավորվել սփյուռքի կողմից:

Սփյուռքի աջակցության ավելի արդյունավետ համակարգում:

Անկախությունից ի վեր սփյուռքի կողմից հովանավորվող

կազմակերպությունները (որոնցից են Հայաստան Համահայկական

Հինադրամը, Հայ Օգնության Միությունը և Հայկական Բարեգործական

Ընդհանուր Միությունը) գումարներ են նվիրաբերել շինարարական

ծրագրերի, դպրոցների և հիվանդանոցների համար: Արդյոք ժամանակը

չէ՞, որ պետությունն ստանձնի ենթակառուցվածքները ֆինանսավորելու

գործը, իսկ սփյուռքը՝ առողջապահական, բնակարանաշինության, աշխատատեղեր ստեղծելու, վերաբնակեցման և, որ ամենակարևորն է, մարդկանց Հայաստան բերելու և նրանց ընդունելուն վերաբերող ծրագրերի ֆինանսավորումը:

Սույն հետազոտական աշխատանքի հովանավորը և իրականացնողները բոլոր շահագրգիռ անձանց և կազմակերպություններին հրավիրում են մասնակցելու այս հարցերի քննարկմանը և հանդես գալու Հայաստանի ապագան կերտելու իրենց առաջարկություններով:

Եկեք լավատես լինենք

Կարևոր է, որ Հայաստանի համար ցավոտ հարցերին մենք մոտենանք լավատեսության զգացումով: Բացասական մոտեցումը և վերաբերմունքը նույնպիսի բացասական արդյունքներ են ծնում: Հիշենք Վիլյամ Սարոյանի խոսքերը.

«Համարձակեցե՛ք բնաջնջել Հայաստանը: Տեսե՛ք թե կրնա՞ք:
Աքսորեցե՛ք դեպի անապատները առանց հացի եւ ջրի:
Յետոյ տեսե՛ք, թե անոնք արդեօք կրկին չեն խնդա, երգե կամ աղօթե:
Որովհետև երբ անոնց երկուսը աշխարհի որեւէ մասում հանդիպե,
Տեսե՛ք, թե անոնք արդեօք մի Նոր Հայաստան չեն ստեղծե:»:

Հայերի տոկունությունն ու հաստատուն կամքն առասպելական են: Ռիբեմն, եկե՛ք այս հատկություններն ուղղենք Հայաստանի սոցիալական խնդիրների լուծմանը:

Հարգանքներով՝

Վահան Գոլոլեան
Գոլոլեան Հիմնադրամ
Տորոնտո, Կանադա
Էլ-փոստ՝ vk@kololianfoundation.com

2013թ., հոկտեմբեր

Հետազոտական աշխատանքում ներգրավված կազմակերպությունները և խմբերը

Ծրագիրը ֆինանսավորել է **Գոլդլեան Հինադրամը** (Կանադա): Իրականացրել են հետևյալ կազմակերպությունները.

Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն
Հետազոտական խմբերի ընտրության գործընթացի ղեկավար
Թևան Պողոսյան, Վահան Ասատրյան

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ խմբերի կողմից՝

Ռուս-հայկական (Մլավոնական) համալսարանի հետազոտական խումբ. Անի Ավետիսյան, Ելենա Մուրադյան Էլինա Սահակյան, Վերոնիկա Աղաջանյան, Տաթևիկ Հովհաննիսյան, Ելենա Կոժեմյակինա	123 Հովսեփ Էմինի փ., 0051, Երևան, Հայաստան: Էլ-փ.՝ rauresearch@gmail.com Հեռ.՝ +37410.22.92.54 Ֆաքս՝ +37410.28.97.01
---	--

Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի հետազոտական խումբ Հայկ Սարգսյան, Քրիստինե Անտոնյան, Կառլեն Խաչատրյան	Աբովյան փ. 52, 0025, Երևան, Հայաստան Էլ-փ.՝ kristine_antonyan@ysu.am Հեռ.՝ +37410.54.41.00
---	---

Հետազոտական խումբ Արշակ Բալայան, Արմեն Գաբավյան, Ավետիք Մեջլումյան	Աբովյան փ. 52, 0025, Երևան, Հայաստան Էլ-փ.՝ abalayan@ysu.am Հեռ.՝ +37491.01.14.42
---	--

Հրայր Մարուխյան Հիմնադրամ Դոկտոր Խաչիկ Դեր-Ղուգասյան	Մհեր Մկրտչյանի փ., 0010, Երևան, Հայաստան Էլ-փ.՝ info@hraymaroukhian.com Հեռ.՝ +37410.52.18.90 Ֆաքս՝ +37410.52.14.53
--	---

Գոլդլեան Հիմնադրամի կողմից զեկույցների համակարգող՝ Կամո Մայիլյան

Ներածություն

Ծանուցում

Հայաստանից արտագաղթի ծավալներն աննախադեպ չափերի են հասել: Գելլափ կազմակերպության վերջին ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանի բնակչության 40 տոկոսի մոտ առկա է արտագաղթելու ցանկություն: Այս ցուցանիշն ամենաբարձրն է նախկին Խորհրդային Միության այն մեկ տասնյակից ավելի երկրների շարքում, որոնցում կատարվել է տվյալ ուսումնասիրությունը:¹ Այս միտումը Հայաստանի համար լուրջ սպառնալիք է պարունակում: «Ուղեղների արտահոսքը» գրկում է երկիրն այն մտավոր կարողությունից, որը կարող էր օգտագործվել գիտելիքահեղձ արտադրանքի ստեղծման և արտահանման, ինչպես նաև տնտեսական աճի խթանման համար: Վերջին շրջանում զգացվում է ընտանիքներով արտագաղթելու միտման աճ, ինչպես նաև ծնելիության մակարդակի անկում և բնակչության ծերացման միտում, ինչը Հայաստանի ժողովրդագրական հեռանկարը վտանգի առաջ է կանգնեցնում:

Սույն զեկույցում ներկայացվում է Հայաստանի ժողովրդագրական իրավիճակը՝ ներկայիս միտումների դրդապատճառները բացահայտելու և ժողովրդագրական ճգնաժամի հետագա միտումները կանխելու նպատակով: Հետազոտությունն իրականացվել է հայաստանյան խմբերի կողմից, որոնք ընդհանուր միտումները բացահայտելու նպատակով ուսումնասիրել են վիճակագրական տվյալներ, այլ հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև՝ ֆոկուս խմբերի քննարկումների և հարցումների արդյունքներ: Հետազոտական խմբերի կողմից նաև ուսումնասիրվել են հեռավոր շրջանների վերաբնակեցման և սփյուռքից բնակչության ներհոսքի ապահովման հաջողված օրինակներ: Նման բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հանդես գալու առաջարկություններով, որոնց օգնությամբ Հայաստանի կառավարությունը և այլ շահառուները կարող են կանգնեցնել Հայաստանում բնակչության նվազման միտումը:

Սույն զեկույցի վրա աշխատել են վեց հետազոտողներ՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանից, երեք հետազոտողներ՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի «Հետազոտության և բիզնեսի կենտրոնից», երեք անկախ հետազոտողներ՝ Հայաստանից, և մեկ հետազոտող՝ Հրայր Մարուխյան հիմնադրամից:

Արտագաղթի սուբյեկտիվ պատճառները

Չնայած 1991թ.-ին Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած տնտեսական զարգացման փուլերին՝ Հայաստանում դեռևս ցածր մակարդակի վրա են

¹ Ն. Էսիպովա, Ա.Պուգլիս: Նախկին Սովետական Միության երկրներում արտագաղթելու ցանկությունը տարբեր է: *Գելլափ*: Դիտվել է հետևյալ կայքից՝ http://www.gallup.com/poll/161591/desire-leave-fsu-ranges-widely-across-countries.aspx?utm_source=alert&utm_medium=email&utm_campaign=syndication&utm_content=morelink&utm_term=All+Gallup+Headlines++World (վերջին անգամ դիտվել է 2013թ. հուլիսի 16-ին)

կառավարման որակը և շուկայական կանոնակարգումները: Հայաստանում առողջապահության, կրթության և հասարակական ծառայությունների վրա կատարած ծախսերի մակարդակը աշխարհում ամենացածրերից է (ՀՆԱ-ի համեմատությամբ): Ապրանքների ներմուծման և այլ տնտեսական հարաբերություններում մենաշնորհների և օլիգարխիկ վերահսկողության մեծ դերը սահմանափակում են աճի և արտադրության հնարավորությունները, ինչն իր հերթին հանգեցնում է գների աճին և մանր բիզնեսների հնարավորությունների սահմանափակմանը: Հայաստանի բնակչության շուրջ մեկ երրորդը աղքատ է:

Ուստի, վերը նշված փաստերը հաշվի առնելով, պատահական չէ, որ 2010թ. Ազգային Վիճակագրական Ծառայության տվյալների համաձայն, հայերի՝ արտագաղթելու որոշման հիմնական պատճառները տնտեսական են: Եկամուտների հայթայթման խնդիրն առաջին տեղում է, ինչին հաջորդում են ընտանիքների միավորման և այլ հարցեր:

Սույն զեկույցի համար կատարված հարցումների շնորհիվ կարելի է ավելի խորը պատկերացում կազմել արտագաղթելու որոշման հիմքում ընկած դրդապատճառների վերաբերյալ:

- Համեմատաբար երիտասարդ և կրթված երիտասարդների շրջանում կատարված հարցումներից մեկի տվյալների համաձայն, տնտեսական դրդապատճառներից բացի, արտագաղթելու որոշումը պայմանավորված է նաև մասնագիտական աճի և զարգացման հնարավորությունների պակասով, ինչպես նաև՝ իրավունքի պաշտպանության, ժողովրդավարության և կառավարման ավելի բարձր մակարդակ ունեցող հասարակություններում ապրելու ցանկությամբ:
- Հայաստանի ամբողջ տարածքը ներառող մեկ այլ ուսումնասիրության արդյունքների համաձայն, հարցվածների շուրջ մեկ երրորդը նախատեսում են լքել երկիրը հաջորդ երկու տարվա ընթացքում: Հարցումների ժամանակ զբաղվածություն ունեցող հարցվածների մեծ մասն այլ երկրներ մեկնելու հնարավորություն են որոնում՝ ավելի բարձր վարձատրվող և իրենց մասնագիտական ունակությունները լիարժեքորեն օգտագործելու հնարավորություն տվող հեռանկարների համար: Երկիրը լքելու ցանկությունը հիմնականում պայմանավորված է երկարաժամկետ նպատակներով, որոնց հասնելու համար մարդիկ որոնում են արտագաղթելու և այլ երկրներում (ավելի հաճախ Ռուսաստանում, ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում) հիմնական բնակություն հաստատելու հնարավորություններ:

Արտագաղթը խթանող համակարգային խնդիրներ

Մարդկանց արտագաղթելու ցանկության և ընկալումների հիմքում ընկած են Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավիճակին վերաբերող ավելի խորքային համակարգային խնդիրներ: Նման նախադրյալների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի պարզ պատկերացում կազմելու այն նախադրյալների վերաբերյալ, որոնք մարդկանց ստիպում են արտագաղթելու որոշում կայացնել՝ սեփական երկրում իրենց ընտանիքների և երեխաների ապագան կառուցելու փոխարեն:

Տնտեսության և բիզնես մթնոլորտին վերաբերող խնդիրներից են.

- *Բիզնեսների կենտրոնացումը և մենաշնորհը.* Բիզնես ոլորտները վերահսկվում են մի խումբ մարդկանց կողմից, ովքեր նաև ուղղակիորեն ներգրավված են պետական կառավարման գործում՝ վերահսկելով առանձին տարածքներ կամ տնտեսության ոլորտներ: Մենաշնորհային կառավարման նման համակարգը փոքր մրցակիցներին խոցելի է դարձնում (հաճախ դուրս մղելով շուկայից), հանգեցնում է գործազրկության, ինչպես նաև՝ հասարակությունում ֆինանսական միջոցների խիստ անհավասար բաշխմանը: Նման շուկայական անհավասար պայմաններում չկան ներդրումների և աճի խրախուսման համապատասխան պայմաններ:
- *Գործարար ոլորտին վերաբերող խնդիրներ.* Հարկարարությունը, ընկերությունների գործունեության կանոնակարգումը, ներմուծման/արտահանման ոլորտի քաղաքականությունը, ֆինանսների կառավարման, սեփականության իրավունքի և պայմանագրերի կիրարկման գործընթացները դեռևս արդյունավետության բավարար մակարդակի վրա չեն գտնվում և արդար չեն:
- *Ղատարանների անկախության մակարդակը* լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Դատական համակարգը պետք է կառավարությունից և ազդեցություն ունեցող տնտեսական շահերից ամբողջապես անկախ լինի: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության, ներդրումների ներգրավման, ինչպես նաև ներդրողների սեփականության պաշտպանության և տնտեսական վեճերի արդար լուծման երաշխիքներ ապահովելու համար դատական համակարգը պետք է անկախ լինի:
- *Արդյունավետ տնտեսական ինստիտուտների անհրաժեշտությունը.* Տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով գործող ինստիտուտները (օրինակ, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը) արդյունավետ չեն տնտեսական հարաբերությունները վերահսկելու և ազատ մրցակցություն ապահովելու գործում, մանր բիզնեսները զգալի դերակատարում չունեն, իսկ քաղաքացիական հասարակությունը և զանգվածային լրատվամիջոցները չեն կարողանում ապահովել հասարակության և տնտեսության մասնակիցների ավելի լայն շրջանակի մասնակցությունը կառավարման գործընթացում:
- *Կրթական համակարգի խնդիրները.* Բարձրագույն ուսումնական հաստատությունները շրջանավարտներին չեն ապահովում շուկայում բարձր պահանջարկ ունեցող գիտելիքներով, ինչպես նաև տեխնիկական ոլորտի շրջանավարտներին չեն ապահովում մասնագիտական զարգացման անհրաժեշտ հնարավորություններով:

Օրենքի իշխանության հետ կապված խնդիրները հիմնականում վերաբերում են ներկայիս դատական և իրավապաշտպան համակարգում օրենքների կիրարկմանը: Քրեական նախաքննության փուլերը շատ խոցելի են կոռուպցիայի և ոստիկանության կողմից չարաշահումների տեսանկյունից, իսկ իրավաբանների դերը պաշտպանության գործընթացում սահմանափակված է:

Հայաստանի կառավարման համակարգը միջազգային դիտորդների կողմից թույլ է գնահատվում: Կառավարման գործընթացում հասարակության մասնակցությունը սահմանափակված է ընտրություններով, իսկ որոշումների կայացման գործընթացը թափանցիկ չէ և չի ապահովում հասարակության լայն շերտերի մասնակցությունը: Անկախ կազմակերպված հասարակական խմբերը դեռևս բավարար չափով զարգացած չեն և հաճախ արդյունավետ գործունեություն չեն կարողանում իրականացնել: Խորհրդարանական ընդդիմությունը շարունակում է մասնատված մնալ՝ առանց միասնական կազմակերպված գործելառճի:

Հայաստանի կառավարության կողմից հիմնախնդիրների վերացման՝ վերից վար՝ ուղղահայաց գործողությունները կարող են երկարաժամկետ արդյունավետություն ապահովել միայն այն դեպքում, երբ բոլոր մակարդակներում գործեն հորիզոնական վերահսկման արդյունավետ ինստիտուտներ:

- Հայաստանում անհրաժեշտություն կա ստեղծելու և ամրապնդելու ինստիտուտներ, ինչպիսիք կարող են լինել, օրինակ, իրավաբանների և մարդու իրավունքների կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների կոալիցիաները, որոնք կարող են արդյունավետ գործունեություն ծավալել օրենքի իշխանության, սեփականության իրավունքի պաշտպանության, հավասար տնտեսական հնարավորությունների ապահովման, արդյունավետ հանրային ծառայությունների մատուցման, ինչպես նաև թափանցիկ որոշումների կայացման ապահովման ոլորտներում:
- Հայաստանում արդյունավետ գործող տնտեսական ինստիտուտների կարիք կա, ինչպիսիք կարող են լինել, օրինակ, տնտեսական օմբուդսմենի և տնտեսական մրցակցության, սեփականության իրավունքի պաշտպանության կազմակերպությունների կոալիցիան: Նման գործունեությունը պետք է ուղղված լինի շուկաներում ազատ գործունեության և մրցակցության ապահովմանը, մանիպուլյացիաների կանխարգելմանը, նորարարությունների և աճի խրախուսմանը, ինչպես նաև ներդրողներին ռիսկերից պաշտպանելուն:
- Թափանցիկ զանգվածային լրատվամիջոցների գործունեությունն ու առավել հզոր քաղաքացիական հասարակությունը կարող են օգնել ավելի արագ ձևավորել ինստիտուտներ և կառավարությանը հաշվետու դարձնել հանրային եկամուտների ավելացման, առողջապահության, կրթության, հանրային ծառայությունների մատուցման, ինչպես նաև հավասար տնտեսական և սոցիալական պայմանների ապահովման հարցում:

Իսրայելի փորձը՝ որպես օրինակ

Քանի որ Հայաստանի ժողովրդագրական ճգնաժամը հաղթահարելու ուղիներից մեկը սփյուռքից մարդկանց ներհոսքն ապահովելու հնարավորությունն է, Հայաստանը կարող է ուսումնասիրել այդ գործում Իսրայելի հաջողված օրինակը: Դեռ 1948թ.-ին անկախություն հայտարարելուց առաջ էր, երբ Իսրայելը նոր երկիրը մարդկանցով լցնելու նպատակով սկսեց հրեաների ներգաղթի քաղաքականություն մշակել: Աշխարհասփյուռ հրեական համայնքներից ստացվող լուրջ ֆինանսական հոսքերն Իսրայելը ներդրեց ենթակառուցվածքների և գյուղատնտեսության

զարգացման ծրագրերի մեջ, իսկ ներգաղթյալներին առաջարկեց բնակարանային պայմաններ և ժամանելուն պես՝ քաղաքացիություն ստանալու հեռանկար: Լավ պլանավորված ռազմավարական մոտեցումը, հստակ նպատակաուղղված քաղաքականությունը և արդյունավետ կառավարումը հաջողություն բերեցին Իսրայելին: Ներկայումս ամբողջ աշխարհից հայրենիք վերադարձող հրեաներին ընդունելու և կազմակերպելու հարցերով զբաղվում է Իսրայելի Ներգաղթյալների Ընդունման Նախարարությունը, որն աջակցություն է ցուցաբերում սկսած այն պահից, երբ անձն իր երկրում բնակություն հաստատելու ցանկություն է հայտնում:

Հայաստանը և Իսրայելն ունեն մի շարք ընդհանրություններ, որոնցից են կոնֆլիկտային տարածաշրջաններում աշխարհաքաղաքական դիրքը, քիչ ռեսուրսներ ունեցող փոքր տարածքները, ինչպես նաև՝ աշխարհով մեկ տարածված սփյուռքի առկայությունը: Չնայած այս ամենին, ի տարբերություն Իսրայելի, որտեղ սփյուռքն ակտիվ գործունեություն է ծավալում՝ կառավարության հետ համագործակցելով և տնտեսությունում լայնածավալ ներդրումներ կատարելով, այսօր հայկական սփյուռքը ձեռնպահ է մնում Հայաստանում ներդրումներ կատարելուց (բիզնես միջավայրի և օրենքի հետ կապված խնդիրների պատճառով):

Հայաստանը կարող է Իսրայելի փորձը գործածել՝ օրինակ վերցնելով մի շարք հիմնական հարցերում.

- Բիզնես և կառավարման ոլորտի բարեփոխումների միջոցով սփյուռքի ներդրումների ներգրավում, որի արդյունքում տնտեսությունն ավելի հիմնված կլինի գիտելիքի, նորարարությունների, տեխնոլոգիաների և ներդրումների վրա: Այս նպատակով խիստ առանցքային է օրենքի իշխանության ապահովումը: Օրենքի իշխանության հետ կապված խնդիրների առկայության դեպքում Հայաստանում ներդրումների ռիսկայնությունը բարձր կմնա.
- Ներդրումային հոսքի ուղղորդում դեպի ենթակառուցվածքներ, միևնույն ժամանակ սփյուռքի կողմից նվիրաբերված կամ ներդրված գումարների նպատակային և թափանցիկ օգտագործում.
- Սփյուռքից նվիրատվություններ ներգրավող կազմակերպությունների (Հայաստան Համահայկական Հիմնադրամ, ՀԲԸՄ և այլն) համակարգված գործունեություն՝ հայրենադարձությանն աջակցելու նպատակով դրամահավաքի կազմակերպման համար.
- Սփյուռքահայության շրջանում Հայաստանում բնակություն հաստատելու վերաբերյալ ակտիվ քարոզչություն՝ Սփյուռքի Նախարարության կողմից:

Հաջողված օրինակներ. Քաշաթաղի և Շահումյանի վերաբնակեցումը

Արցախի երկու շրջաններում վերաբնակեցման ծրագրերում արձանագրված հաջողությունը հնարավորություն է տալիս ավելի պարզ պատկերացում կազմելու վերաբնակեցման հնարավորությունների վերաբերյալ: 1990-ականների վերջից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում բնակչության աճի միտումներ են արձանագրվել՝ 1991-94թ.թ.-ի համեմատ, երբ պատերազմի հետևանքով տարածքի բնակչության թիվն անկում էր ապրել: Չնայած քաղաքականապես զգայուն տարածաշրջանային իրավիճակի պարագայում դժվար է վերաբնակեցման ադմինիստրատիվ քաղաքականության մանրամասն քայլեր անել,

այդուհանդերձ վերաբնակեցման փուլերում տարբեր գործիքներ են կիրառվել, որոնցից են արտոնությունների տրամադրումը, զբաղվածությունը, նյութական, ինչպես նաև ձեռնարկատիրական օգնությունը:

Այս շրջաններ տեղափոխված մարդկանց մեծ մասը վերաբնակվելու որոշում են կայացրել հիմնականում Հայաստանի սոցիալական և բնակարանային խնդիրներից ազատվելու համար: Այդ մարդկանց որոշումների վրա ազդել է նաև իրենց՝ արդեն տեղափոխված և տեղավորված բարեկամներից և ծանոթներից ստացված տեղեկատվությունը: Թեև այս շրջանների բնակիչների զգալի մասը ևս հետագայում մեկնել է, այնուամենայնիվ ներկայումս արտագաղթի ցուցանիշներն այնտեղ ցածր են:

Շահումյանի և Քաշաթաղի շրջանների վերաբնակեցման փորձից ելնելով, վերաբնակեցումն ավելի գրավիչ դարձնելու համար անհրաժեշտ է.

- Մշակել վերաբնակեցման **ռազմավարություն և գործողությունների ծրագիր**.
- Բարելավել տեղի սոցիալ-տնտեսական իրավիճակը՝ մինչ վերաբնակեցման համար նոր խմբեր հրավիրելը.
- Հետևողական աջակցություն ապահովել տեղի համայնքների բնական աճը (ծնելիության բարձր մակարդակը) և զարգացումը խրախուսելու ուղղությամբ:

Արդյունավետ կառավարումը, բնակարանային խնդիրների լուծումը, սեփականության իրավունքի պաշտպանությունը և ակտիվ քարոզչությունը, վերը նշված առաջարկությունները կարող են նպաստել այս և Հայաստանի այլ հեռավոր շրջաններում հաջողակ վերաբնակեցում իրականացնելուն:

Վերաբնակեցում Միջին Արևելքից

Վերջին ժամանակաշրջանում Միջին Արևելքում բախումների մեջ հայտնված մի խումբ հայերի շրջանում հարցումներ են անցկացվել՝ պարզելու, թե ինչն է իրենց ստիպել գալ Հայաստան, և ինչը կդրդի նրանց մնալ Հայաստանում: Չնայած հարցվածների մեծ մասը մինչ բնակության համար վերադառնալը եղել է Հայաստանում, սակայն տեղափոխվելիս նրանք դժվարություններ են ունեցել (հիմնականում ընդունելու և տեղի կյանքին հարմարվելու նպատակով համակարգված ծրագրի բացակայության պատճառով): Հայաստանի համար խոսուն օրինակ կարող է ծառայել Իսրայելի Ներգաղթյալների Ընդունման Նախարարության քաղաքականությունը:

Առաջարկություններ

Հայաստանի ներկայիս իրավիճակի և պոտենցիալի վերլուծության արդյունքում Հայաստանի կառավարությանը ներկայացվում են հետևյալ առաջարկությունները.

- **Զբաղվածություն և կրթական համակարգ**
 - Աշխատատեղեր կարող են ստեծվել ներդրումների ներգրավման արդյունքում, ինչն էլ իր հերթին պահանջում է բարեփոխումներ՝ մանր ձեռնարկատիրության և ներդրումների համար Հայաստանի բիզնես մթնոլորտն ավելի բարենպաստ դարձնելու համար.
 - Կրթական համակարգը պետք է բարեփոխվի՝ շուկայի կողմից պահանջարկ վայելող մասնագետներ պատրաստելու նպատակով: Արհեստների և տեխնիկական ոլորտներում նոր կրթական ծրագրերի անհրաժեշտություն կա:
- **Բիզնես մթնոլորտ**
 - Մանր և միջին ձեռնարկատիրության համար պետք է ավելի բարենպաստ գործունեության պայմաններ տրամադրվեն՝ բիզնես գործընթացների, հարկարարության, մաքսային ոլորտի, ինչպես նաև նախկինում իրականացված բարեփոխումների հետևողական կիրարկման միջոցով:
- **Տնտեսական և դատական ոլորտի բարեփոխումներ**
 - Տնտեսական վեճերի ներկայիս անարդյունավետությունը վերացնելու համար պետք է ստեղծվեն նոր ինստիտուտներ, ինչիպիսիք են միջնորդների և ֆինանսական օմբուդսմենի ինստիտուտները, որոնք կոչված են պաշտպանելու տնտեսվարող սուբյեկտների և ներդրողների իրավունքները:
- **Օրենքի իշխանություն և դատաիրավական համակարգ**
 - Դատաիրավական համակարգը պետք է բարեփոխվի, որպեսզի բոլոր բիզնեսները՝ փոքր թե մեծ, օրենքի առաջ հավասար իրավունքներ ունենան: Բոլոր մարդիկ պետք է օրենքի առաջ հավասար լինեն՝ առանց ոստիկանության կամ ազդեցություն ունեցող որևէ անձի կողմից անպատժելի արարքի որևէ նախադեպի:
- **Հաշվետու կառավարություն**
 - Կառավարման մարմինները պետք է թափանցիկ լինեն իրենց գործունեությունում, ինչպես նաև պետք է հանրային կյանքին վերաբերող կարևոր որոշումներն ընդունեն համայնքների մասնակցությամբ քննարկումների արդյունքում: Կառավարության՝ ներկայիս բարեփոխումների ընթացքը պետք է արագացվի, որպեսզի նկատելի դառնա հասարակության կյանքի որակի վրա դրանց դրական ազդեցությունը:
- **Սփյուռքի հետ փոխհարաբերությունները**
 - Հայաստանի կառավարությունը պետք է առավել նախաձեռնող դիրքերից հանդես գա սփյուռքի հետ հարաբերությունների զարգացման գործում՝ Սփյուռքի նախարարության օգնությամբ ավելի արդյունավետ միջոցառումներ կազմակերպելու միջոցով: Կառավարությունն իր հերթին

պետք է ցույց տա, որ Հայաստանում սեփականության իրավունքը պաշտպանված է, որպեսզի սփյուռքահայերը պատրաստակամ լինեն ներդրումներ կատարելու:

- **Հայրենադարձության և վերաբնակեցման ռազմավարություն**
 - Անհրաժեշտ է Միյուռքի նախարարության կողմից հայրենադարձության և հայրենիք վերադարձած հայերի ընդունման հստակ ռազմավարության և գործողությունների պլանի մշակումը: